

ՊԱՍՏԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Պուշկարիոյ համար	12 Յր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար տարեկան	15 "
Վեցամսեայ	8 "

Ամերիկայի համար	3 Տր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	1.50 "

Դասնորման տղր առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 ստեփիլ է. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըրջայ:

Վստնայի համար մ'ոքի 40 ստեփիլ

ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՈՒՄԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ Տ՝ՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԸ ԱՌԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Նամակ և գրամ գրկելի ներքազրուքիանս հասցեիև .

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար
ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար
ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք եւ չնն տրուի

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԿԻՆԸ ՊԵՏՐ Է ԿԱՆՈՒԿ ՎՃՈՐԷ

ՊԱՐՍԱԿԱԳԻՐ

Ա. Ռ.

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՂԲՍԹՐԱՍՊԱՆ ՀԻՆՉԱԿԵԱՆՆԵՐՈՒՆ

Այսօր միթիւնկիս մէջ պատմութեան ձեր հակամարտութիւն այն արարքներն որոնց մանրամասնութիւններ արդէն հեռագրած են ժամանակին բոլոր հայ թերթիներն .

Միթիւնկիս որոշմամբ ձեր հասցէին կուղղենք «Նշարարասպան» մակդիրը :

Քանի որ ձեռքերնիդ երկարեցիք վատարար սպաննելու թափով մը քսան և հինգ տարիներէ ի վեր ազգին օգտին համար անգուլ աշխատող մշակի մը՝ այն է պ. Արփիարին վրայ :

Քանի որ, տասն տարիներէ ի վեր դիւցազնական հերոսութեամբ ամէն փորձանաց կուռ կրճով դիմադրող ազնիւ ու քաջարի զինուոր ճահէն—Միսոյի յուզայաբար համբուրելով մարտիրոսացիք :

Քանի որ, ձեր անսանձ և ըստոր կիրքերու յագուրդ տալու համար չուզեցիք անսալ, «Յիրեցէք զմիմեանս, զի Աժ. սէր է» հանապաղ քարոզող պատուելի Գ. Զիթեանին, որ զնաց նահատակուեց և ինկաւ ձեր թայֆայական հաթաղաներուն տակ :

Քանի որ, զիւ այս թարմ արիւններուն շիթերը չը ցամաքած կը փութաք կ'ստաղի վրէժխնդրութեամբ մը զնտակահար ցամաքեցնել պ. Սապահ—Քիւլեանը :

Եւ քանի որ, տասն տարիներէ ի վեր թուրքին ահ ու սարսափ դարձած Սեպուհ լեռան աննուաճ առիւծ Քեռին բռնուիլ և կախազան բարձրանալուն պատճառներ դարձեալ դուք «Նշարարասպան» հնչակեաններդ էք եղած (ըստ Շարժումի) :

Այսօր վշտախառն սաւառ պարսաւելով կը պարսաւենք զձեզ, և կը շարտենք ձեր երեսին մուղղիւթեան արդար ցատուէն ժայթքող զայրոյթը որ կըրէ :

«Մեծ և բիւր ամօթ», յեղափոխական յետնորդներուդ, քաջուեցէք ասպարէզէն, որ զէթ չը պղծուի յեղափոխական մաքուր անունը «Նշարարասպան» ստակառիթ մակդիրով :

Ի դիմաց միթիւնկի

Կարգիչ յանձնախումբ

Մ. Ն. Արամեան

Հրանդ Յ. Մերուսեան

Պ. Յովնանեան

13/26 Յուլիս 1903

Բուսնուք

Տէր Խմբագիր,

Այսօր յետ պատարագի, Շահէն-Միսոյի և Գարեգին Զիթեանի յիշատակներուն համար հոգեհանգիստ կատարուեցաւ բաձարձակապէս Չեղոքներու նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ Միթիւնկի մը :

Այս սովոր հաւաքուած էին ամեն դասակարգէ երկուսն ուղղայիններ, որոնց միաձայն հաւանութեամբ կազմուած Յանձնախումբս կը խնդրէ Պատ. Խմբագրութեանէդ որ յարեհաճի հրատարակել ներքին պարտաւարքին «Որ համար կը փութամբ նուիրել մեր ջերմագին շնորհակալիքներն :

Մ. Ն. Արամեան

Հրանդ Յ. Մերուսեան

Պ. Յովնանեան

13/26 Յուլիս 1903

Բուսնուք

ՃԻՅԵՐՃԵԱՆԻՆ ՀԱՆԴԵԱԸ

Սաէտիւնէնիէի սրահը լեցուն է իգական ճերմակ ու զուարթ արդուպարդի պէսպիսութիւն մը գրասանդած է բառթէնը : Այդ խայտարեղ յատակին վրայ աչքդ հաճոյքով կը հանդիս, ու զուգութեան սարսուռ մը կտաղնտկէ վերնամաշկդ՝ հակառակ խղճող տաքութեան որ քրտնքի մանր ծորակներու կը վերածէ ծակտիկներդ : Չարչարանքներ կան որոնց մարդ ինքզինքը յօժարա-

կամ կը յանձնէ, ստոր, մէջ կարծես անձանթ հաճոյք մը որոնելով : Դպրոցական հանդէսները առաջին սեպը կը բռնեն այս շարչարանքներուն մէջ, մանաւանդ երբ որ անոնք կազմակերպուած են ձիթէրճեաններու կողմէ . . .

Բիւր կը պարզուի. աշակերտները, մանչ աղջիկ, կը շարունակուի սեւ տաքաղին պաշտօնականութեամբ յատկորէն կանչատուի հոն տնօրէնը, արարողական, խորհրդաւոր, ծանրակշիռ կեցուածքովը : Այլ կողմը դաշնակը, որուն առջեւ թեթեւօրէն կուրուագծի նախան Պէյրին մանրուկ ու խոստովուկ սիւրուէրը : Յանկարծ պ'ձիթէրճեան կը յառաջանայ զէպի հանդիսակները և ցած ձայնով բան մը կը փսփոսայ անոնց՝ սղաշական հրաւերի մը պէս : Առաջին կարգէն քանի մը կիներ օտար կեղւան, վարանոտ, ուրիշներ, ետեւի կարգէն, անոնց կը հետեւին, տատամտական որ, անզգած, սեղերնուն չեն երբար : Պ. ձիթէրճեանին փափկիկ ձայնը չէ թրթուսցած անոնց ականջներուն, յայտնապէս : Ելլողներն ալ, սակայն, նորէն սեղերնին կը տոտուելին : ու ամէն բան վերջացած է : Դաշնակն ու տղաք կը համբրգին : Սրահին այն մասը որ տնօրէնին ձայնին հասողութեանէն դուրս էր, բան մը չհասկցաւ այս բոլոր մնչկատակէն : Ետքէն հասկցանք որ տնօրէնը հրաւերներ է ներկաները «յոտնկայս» ունկնդրելու իշխանին ձօնուած երգ մը . . . Հայ դաշնակահարը, կեանքին մէջ անշուշտ առաջին անգամ ըլլալով ծափահարուեց և ոչ թէ սրահէն, այլ . . . աշակերտներէն :

Որոնց հնչուն ծափիկներուն տակ բեմը դողդոջաց : Պ. ձիթէրճեան սիրուն նորութիւններ հրամցելու ճիգերն ապրեցաւ . . . տանց յաջողելու :

Յետոյ ճառ, թուղթի վրայ, տղեկի մը կողմէ : Յետոյ երգ՝ յիսնամեայ կամ հարիւրամեայ հնութեամբ : Մեր պայքերուն ոսկորները անշուշտ սարսաղցին իւր որ

կիրակնօրեայ երգերուն, որոնք իրենց մանկութեան յիշատակները կը վերբերէին այնքան սրբալիօրէն . . . Յետոյ ոտանաւոր աղջկան կամ տղու կողմանէ, տարտամու անհասկնալի մը թմրածանք մը : Յետոյ երգ : Տղոց երկու շուկերուն մէջտեղ, մէկ ձեռքը ճրպոս, միւս ձեռքը թուղթի կտոր մը, Պ. տնօրէնը կը վարէ երգերը մաէսթրօյի մը ծանրակաց և ինքնամփոփ լրջութեամբ : Սղաղու է, բայց միանգամայն զաւեշտական : Իր ձայնը, թաւ և գոռ, մերթ կորոտայ մանկունակ հնչականութեանը վրայ փոքրիկներուն համբարութեան :

Յետոյ ճառ «Եթէ տոգոյն մահու հրեշտակ . . .» աս տաքուն, Պ. ձիթէրճեան անհանգիստ ընելու չէր Յուլիս ու Օգոստ մեծ երգիչը : Մարգասիրական չէ : Յետոյ երգ ճառ, երգ, ճառ, անհունօրէն. անվախճանօրէն . . .

Հէք մանուկներ, ինչ գողգոթա առ բեմը, Աստուած իմ : Անոնք կուգան իրարու ետեւէ, մէյմէկ թուղթի կտոր ձեռք ընին, կը կարգան տխուր շեշտով, խղճուկ ու անհասկնալի : Իմաստասիրական ամէնարարձը նիւթեր՝ այդ անգիտակից բերաններուն մէջ՝ կը ծամծամուին, կը կապան, կը սայթաքին . . . Հնութեան իմաստասէրներէն մինչեւ մեր օրերու փիլիսոփաները այդ մանրուկ բերաններէն դուրս կուտանուն, կիւնան, կը կտրտին այդ մութ տախտակամաժին վրայ : Սոկրատ, Օկրուսթ—Քոնիս, Բրիտոս, Լամարթին, Իւկո և ընկերութիւն կեղւան, կը կանգնին, կապրին ու կը մեռնին . . .

Կացու թիւը անորակելի ու աննախընթաց էր : Հոն պէտք էր Պ. Հայկ Փէշտամուսեանը իր ճաթած ձայնովը արձակելու համար իր այլեւս պատմական բառը . . .

—Ոճրագործ . . .
Եւ երբոր բացարձակապէս հասուցուած ես թէ Պ. ձիթէրճեան ինքն իսկ ու է հեռաւոր կամ մօտաւոր ծանօթութիւն չունի ոչ Սոկրատի, ոչ Օկրուսթ—Քոնիսի և

ոչ ալ մարդկային ու է բարձր գէտքի և անոնց վարդապետութեանց մասին, կայուն թիւեր աշքիդ կը ներկայանայ իրօք եզեռնական հանգամանքով մը: Տաս տասերկու տարեկան անգլիտակից աղաքներու բերնին մէջ այդ անուանե՞րը... Պ. ձիւթը ճանաչեալ չուրջը, միջավայրը, սպարած ժամանակը, վայրկենին պահանջներն ու պայմանները, ա՛լ քիչ մը լրջօրէն նկատի առ... վերջապէս ամօթ բան է օգտուիլ այն անպատճառ թեմէն, որուն ապահովութիւնը ունիս...

Հիմակ, Պ. տնօրէնը բեմին առջեւ կանգնած, տղոց վիճակացոյցները կը կարգայ: Բարձրագոյն թիւը 10 է: Ինչքան ինչ առատաձեւ շառլոթիւն, չիկայ տղայ մը որ ունենէ վարթիւ առած ըլլայ: Իսկ տասներու առատութիւնը, անձրեւ էր, անձրեւ: Առտրկանբու շարքին մէջ, Պ. ձիւթը ճանաչեալ աւանդակաւորութիւնը ոտնակոխ ընելով՝ մտցուցած էր նոր առարկայի մը անունը: «Քաղաքավարութիւն»!!! Աս նորութեան համար կարժէ որ 10 մըն ալ մենք տանք իրեն:

Յետոյ ճառ, երգ, ճառ, երգ: Մթնոլորտը կանգալտանայ, կը խղճուինք կոր: Ենձրձ, Պ. ձիւթը ճանաչեալ, Ձերմաշափները պայթեցնելու միտք ունիք:

Աղջիկ մըն է հիմա, առանց թուղթի. կը կակազէ:

«Տուէ՛ք, հարուստներ, ողորմութիւն տուէք... Տուէ՛ք...»

Տուէքները կերկնան, աղջիկը կը շփթի, կը կմկմայ, կը մոռնայ: «տուէ՛ք...» Ինչ, վարժուհին կը հասնի թուղթը ձեռքը, ըզձալի՝ թուղթը: Աղջիկը ողորմուկ ձայնովը կը պաղատի, փոխանակ հրամայելու: ոտնէք, կըսէ, ա՛լ ոչ թէ հարուստներուն ալ վարժուհիին կարծես: «տուէք տա թուղթը որ զոցս կարենամ ըսել...»

Տարբեր թաղով կը սաստկանայ, մանկապարտէզը ոտքի կելլէ: օ՛Ֆ, ճառերէն աղատեցանք: Միւսին իկնեք կը դառնան, իյնալով ելլալով, կերպեն, կը ըզզան: Քիչ մը կը զովնանք, Բայց, ո՛հ, սոսկում, նորէն ճառ, հոգ ալ, ինչպէս տուէն սեղձ այդ բեմին վրայ: Պղտիկները իրարու կը յաջորդեն, կը ճլվան ու կերթան: Ինչ տառապանք: Պարբեր չեն լմնար, ճառերը չեն լմնար: վախ մը կը տիրէ վրաստարգիօք հանդէսը բնաւ: չ՛պիտի լմնայ...

Արդուրս կը նետուիմ շունչ մը առնելու: ու, չգիմանալով շար հետաքրքրութեան մը, նորէն ներս կը մտնեմ: Ամէն բան վերջնապէս վերջացեր է: Ամէն

ճառերէն ետքը, մեծ, հսկայ ճառը: Տնօրէնինը: Սեպտեմբեր թերու տրցակ մը ձեռքը: կը կարգայ՝ կանացի շեշտով մը, ձեռքներն, փաղաքշող, երբեմն լալկան: Այդ ճառը բոլոր առջի անհասկնալի ճառերուն պակասորումն էր, անոնց յաղթական վերջը:

Այնչ հասկցայ: Յանկարծ տազնայ մը կունենամ: տնօրէնին ձայնը օդին մէջ կարձակէ: «Պերլինի դաշնագրին 64րդ յօդուածը:» Ձէ՛, ասիկա ծիծաղելիէն: Կաւեշտականէն վեր բան մըն է, ասիկա որակելու բառը դեռ չէ ըստեղծուած:

Դիտողութիւն մը ու վերջացնեմ: Պ. ձիւթը ճանաչեալ անգամն է որ միջազգային մեծ դաշնագրի մը՝ Պերլինի դաշնագրին յօդուածները կը յեղատըլէ կոր հրապարակով: Պերլինի վեհաժողովին պատուիրակներուն ականջը հասնելով վերջով վերջոյ այս պարագան, կրնայ ըլլալ որ բողոք բարձրացունեն, և շատ հաճելի չըլլայ պ: ձիւթը ճանաչեալ, զոր ալ տեսակ ըզզք մը պիտի ստեղծէ իրեն համար: Կը յորդ որեւէ զինքը որ յառաջիկայ դպրոցական հանդէսին մէջ 64րդ յօդուածը ասնի 61րդ յօդուածին մէջ զետեղէ, որպէսզի գիւտնագրութեան իրարանցում մը առաջ չգայ...
Հանդիսանես

ԹԵՂԵԿՑՈՒԹԻՒՆ

Սալմաստ, 1903 Յունիս 2 Հաֆթվան

Նորերս թարգմանու եղող խոսքեր թիւերնորից ազգերով յոյսպէս Դիւման գիւղացի պարսիկ ամբողջ սկզսեց ցոյցեր անել կառավարութեան դէմ: Ինչպէս պատուում են պատճառը եղել է հետեւեալը:

Դիւմանցիք նախկին շահերից, մեծաշնորհում են ստացել, որպէսզի կառավարութեան զինուոր չստան, Բայց կառավարութիւնը առանց ուշք դարձնելու խափու պտահւում է եւ մի քանի մարդկանց էլ բանտն է նստեցնում: Առիթը ինքնատիւքեան տեղի է տալիս ցոյց անելու տրամադրուած ամբողջին, որոնք յարձակում են կառավարչի տան վրայ եւ շարդ ու փշուր անում բանտի դռները եւ զուրս բերում իրենց մարդկանց:

Դատաւորը տեսնելով որ դա իրեն ուժից բարձր է եւ չի կարող դորձադրել, կանչում է թուրք պարսկական սահմանազխին մօտ ապրող յայտնի քուրդ աւազակապետ Ջաֆար աղային: Վերջինս էլ այդ էր ուզում: Իրեն մարդկանցով յարձակում է Դիւմանցոց վերայ, որոնք սարսափած փախչում են մզկիթները եւ սկսում են պաշտպանել, դատաւորը տեսնելով որ խնդիրը վատ կերպարանք կը ստանայ, քուրտներին յետ է կանչում եւ իբրեւ վարձատրութիւն խանութիւն եւ

պարգև է տալիս Ջաֆար աղային եւ վերադարձնում է իրեն տեղը, իսկ ինչորք մնում է այնպէս ինչոր առաջ էր:

Ջաֆար աղան էլ ուս առած լինելով կառավարութիւնը, իսկոյն յարձակում է Տաճկա մասում ապրող պատմական Շարաֆ յի բոլոր ունեցած՝ ձի ոչխար եւ այլն բոլորը թալան է բերում: Այժմ շնորհիւ այդ բանին Սալմաստում բաւականին ընկած է մի արժէքը: վայ չուսողներին:

Ջաֆարը, որ իրեն առանձնայատուկ է այդ ստորնութիւնը, փոխանակ գիւղացիները վրէժ լուծելու, սըրանից երկու օր առաջ յարձակում է Սալմաստի հետեւեալ երեք գիւղերի վերայ՝ Այսն, Ահրեւան եւ Հին քաղաքի վերայ: Վերոյիշեալ երկու գիւղերի թալանը քշելու, սը կառավարութիւնից եւ ոչ էլ գիւղացիներին ոչ մի ընդդիմադրութիւն չի լինում: Նախ՝ որ կառավարութիւնը չունի կուող ոյժ, իսկ գիւղացիքն էլ շնորհիւ իրենց զւղատէր աղաներին, սարսափելի դուրսեան մէջ են, չոր հաց անգամ չի գտնուում խեղճերի տանը: Մի խօսքով կատարեալ ճորտութիւն է տիրում:

Չմտնամ ասելու, որ թալանը տանելիս, քուրտները պատահում են, պարսից սահմանազխի պահպան զինուորներին, սրտք խոտ հնձելիս են լինում: յանկարծակի վրայ են տալիս եւ սպանում են Յին միայն չըբրոգը, որ վերաբերում է լինում խորամանկութեամբ քուրտներին հեռանալուց յետոյ ուզում է վեր կենալ եւ փախչել: քուրտներից մէկը աղբանը նկատելով վրայ է հասնում եւ զարձեալ ուզում է զնդակահարել: Բայց պարսիկը նրանից շուտ է խեղճում եւ քուրտը ձիուց վեր է ընկնում: քուրտի ձին ու հրացանը առած փախչում է:

Հին-քաղաքից սպանվել են 6 հոգի թալանը տանելիս, որոնք քիչ թէ շատ կուի էին բանել:

Թալանած գիւղերից՝ Այսնը եւ Հին-քաղաքը, թէեւ ունին քիչ թիւով հայեր, բայց այնպէս շին վիսուել, ինչպէս պայսիկները:

Ուրախալի է իսկապէս, մինչեւ այժմ - գուտ հայաբնակ գիւղերին դեռ եւս չեն մօտիկեցել վսխնալով: «Յետաշիններից», Բայց՝ ինչ էլ որ լինի, զգուշութիւն է հարկուոր: որովհետեւ այսօր Սալմաստ ոչ ալ ինչ է, միայն թէ մի պաշարուած ամրոց: օր չի տեսնուած որ գիւղ չեն թալանում:

Արժէ մի քանի խօսք էլ Սալմաստի առաջնորդական փոխանորդ Հ. Բնձակ վարդապետի մասին ասել: Կը լինի վից ամիս, որ Բնձակ վարդապետը Սալմաստում է, իսկապէս գովելի է, որ նա կարողացաւ դէմ դնել Սարփարաստների անկաշտում հարստանարութիւններին եւ պէտք է խոստովանել, որ Սալմաստի Հայերը այժմ լաւ են, թէ տընտեսապէս եւ թէ բարոյապէս շնորհիւ Հ. Բնձակ վարդապետին: Բայց մի քանի լիրբ եւ ստոր անձաւորութիւններ, որոնք վաղուց ի վեր պարպուել են մասնութիւններ անկող այժմ էլ կաշտոված լինելով Սարփարաստից, գաղտնի կերպով հեռագրում են Թէհրան Մեծ-մէզկիթին ու պատահան ստացում: որ անմիջապէս Բնձակ վարդապետը դուրս գայ Սալմաստից: Դա սպաւ շուտ ցաւալի է, Սալմաստի չը դրա հետ

միասին կորցնում են թէ իրենց խաղաղ եւ բարեկեցիկ կեանքը եւ թէ կնկնեն անտեսապէս եւ թէ կը մեռնի կրթական գործը, որ սպասելի էր ապագայում:

ՔԱՆԻ ՍԵ ԽՕՒԲ Փ. ՀԱԼԱՃԵԱՆԻՆ

Կատակս «Իրաւունք»-ի անցեալ թիւին մէջ Վարդոյի Նկատմամբ ձեր ստորագրութեան տակ եղած սոսկալի զրպարտութիւններուն պատասխանել չէ, ալ իրբեւ ակնանտես վկայ կուզեմ քանի մը խօսք ըսել:

Ամենատրկական ձեւերով Վարդոյ խօսելու հրաւիրողը դուն և քու ընկեր պ: Սիրական Եղիկեան եղած էք, միեւնոյն ժամանակ իմ միջնորդութիւն խնդրելով, Վարդոյին երկրորդ անգամ մերժմանը վրայ, որ Գուրպէթեանի անձը մէջտեղ կը բերէր:

Ինձի կըսէիք թէ այս միջոցին Վարդոյի երեւումը ժողովուրդին վրայ ահապին տղեցուցութիւն պիտի ընէ:

Երրորդ անգամ մերժութիւնը գաղտնի ժողովուրդը զրգոնցիք որպէսզի բարձրաձայն Վարդոյ կուզենք պոռանք ժողովուրդին կրկնակի պոռալուն վրայ՝ որ Վարդոյ երեւցաւ: և այդ ձեր ստորագրութեամբ երեւցած ցառանցանքները, Վարդոյ ձափահարող և իր բերնովը յանձնախօսքի անգամ ընտրող խմբու գիրը իր փալատի կտորին մէջ ընդունելու առաքիւնութիւնն ալ կունենայ, 500 հոգիի աչքին առջեւ եղած այս տեսակ իրողութիւն մը կը լինէք հրապարակաւ հրէշային զրպարտութիւններով կը խեղաթիւրէք և ժողովուրդին կը հըրամցունէք: անկէց վերջին ալ կը պոռաք թէ իսկական հնչակեանները միզ կուպանեն կոր: Իմ կատարեալ համոզմամբս և ինձի պէս համոզուողներ ալ շատ կան: դուք էք պատճառը և ձեր սագաւակնական խմբակն է որ այս եղբայրասպանութեան սխտէժը մեր մէջ մտցուցած էք:

Կալով ձեր Դաշնակցութեան համար գրածին, կուշտուկուլաւ մը խնդացի, որովհետեւ ձեզ ճանչցողը կրնայ խղճի հանդարտութեամբ վկայել թէ դուք չանթեղուներէ և պիտաբաններէ ուրիշ բանի վրայ քաղաքիւր չեք կարող կապմել: այնտեսակ մարդ մըն էք որ թուրքին մօլլան ձեզ կարող է մահմտական դարձնել: հրէշային խախտի՛ր հրէշայ, և Հրոտի պապը, մոլեանդ կաթովիկ: եթէ ու է մէկը, ձի յօդուածը բերէ և ինչ բան

Գրքի մեջ հարցնե՞ալ պարզեմ եմ որ մէջէն դուրս չէք կարող երբեք (2) Թ. Մտնիկեան

(2) Ստորակները յատուկներն է ներք մնացած միջոցին քանել. իսկ ներքինից մի քիչ ազատ միջոցին հ... և ատուցմէ է Սեղպոս, ներք դուրսին, Փիլիպոս:

ԵՐԿՈՒ ԽՕՍԳ Պ. ՀԱՅԿ ՓԷՇՏՈՒԼ ՃԵՆՆԵՐ

Պատուելի՛, վարդանանց հանդէսի առթիւ ըրած տարած, երկայրի ու պատուելիական բանաստեղծանդ թողած տիրուր սպասորութիւնը հազիւ հազ սկսած էիրք մտնել, ահա՛ այս անգամ կատարելիք լսելու կրկին ձեր բերնէն այն սեսակ խօսքեր, որոնք պարզապէս հայհոյութիւններ են ձեր ընդգրկած վեհ պաշտօնի դէմ:

Եւ այս երկու դէպքերէն սա եզրակացութեան յանգեցանք թէ՛ դուք ժողովուրդեան երեւնալու համար որոշած էք անպատճառ բան մը ընել. և քանի որ չէք կարող գտնուարական ո՛ր և է գործով մը ուղարկութիւն գրուել, որովհետեւ մի միայն զբաղած էք չարչիական հաշիւներով և անձնագրութեան վրայ գաղափար իսկ չունիք, ուստի ուխտած էք արտառոցութիւններու գիծել, և ինքզինքնիդ կորնցուցած ալ ու ձախ անարգանքներ և լուտանքներ թափել, ու այս կամ այն վարկարեկ ընել, եւ քանի որ Յեղակոտի թեան ու անոր հետեւողներու գէ՛ւ խօսած ճառերնուդ պատասխանը փառաբարկապէս քատացաք և չարաչար խայտառակեցաք հրապարակաւ, ուստի այս անգամ ալ պէտք էք յարձակուի գործել այնպիսիներու վրայ, որոնք զօրաւոր չըլլալին, և որովհետեւ մեր ազգի մէջ ամէնստակապաշտպան ըլլալու գաղափարուած արարածները ուսուցիչներն են, ուստի սրաքնիդ անոնց ուղղեցիք:

Նկատողութեան անտրուկ նախորդ աշխրջանին ուսուցչութեան ապագան բարեկաւելու, և Պուլիարանայ կրթական գործը կանոնաւոր հիմերու վրայ դնելու համար՝ ձեր նախաձեռնութեամբ հրապարակ ձեր կոչը, և այս տարուան հանդէսին մէջ ըրած խօսքերնիդ, չի կարողացանք ծիծաղելիս զսպել, և սա եզրակացութեան յանգեցանք թէ՛ դուք անկասկած ճարտար կեղծարար ընել էք, և թելագործուած ձեր անձնական ու չարչիական ստոր հաշիւներէն՝ կարող էք փչած հովին համեմատ սովեցուցութիւններ ընել, ինչ սեծ փոփոխութիւն, տարի մը առաջ ուսուցչութիւնը իր բարձր դիրքին մէջ վերահաստատելու ձգտել, և այժմ զայն ցեխերու մէջ չարտել:

Պարոն՝ եթէ դուք ձեր արուեստին վեհութիւնը ըմբռնած և զազափարականի զգացումներով սողորուած՝ ընդգրկած ըլլալիք այդ վեհ սպասարեւելի, պայծար բոլորովն տարբեր պիտի խօսե՞ք, և այսպիսի դպրոցական հանդէսի մը առթիւ փոխանակ սղէս ամբարի նախապարտումներուն կողմը հակելու և անոնց ոյժ տալու, պիտի բացատրէիք անոր ուսման, կրթութեան և առողջ դաստիարակութեան պէտքը:

Ձեր այս ընթացքով իրաւունք կուսաք ինձի կատչելու ունեցած ոյն

համոզմանս թէ՛ այն անձնաորութիւնները, որոնք իրենց ձեռնարկած անհասարակ այլ և այլ գործերու ձախորդութիւններէն յուսահատած՝ միայն և միմիայն իրենց կաշին քաշկոտելու համար, ուսուցչութիւնը կրնգրկեն, հակառակ իրենց ունեցած ֆազի զարգացումին՝ շարժական հոշիւններով կը վերաբերուին դէպի այն վեհ յարկը՝ զոր իրենց խանութր ըսել կը կարծեն, և դասիճը կըլլան իրենց խնամքին յանձնուած մատաղ սերունդին: Եւ դուք որ, բարեբաղտարար կա՛ր դժբաղդարար սոյն շարքին մէջ գտնուողներէն էք՝ անշուշտ անձնական փորձառութեամբ համոզուած ըլլալու էք սոյն ճշմարտութեան, և ձեր ոճրագործ ըլլալը հրապարակաւ խոստովանելու քաջութիւնը չունենալով՝ թիթեղացած կըզգաք իր ճի իսայթիւնիդ բոլոր ուսուցիչները ձեր դասակարգին մեղակից անուանելով:

Ուսուցիչ

Ռուսոյ ք 13 Յուլիս

ԾՐԱԳՐՈՒԾ ՈՃԻՂ ԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Երեքշաբթի առաւօտ, յուլիս 7, ժամը 11ի տակները Տըսիլ և Տանա փողոցներու անկիւնը՝ երկու ոճրագործ, գաղափարի յարձակեցան Պ. Սապահ-Գիւլեանի վրայ որ տպարանէն փոթ օֆիս կերթար: Չորս դընդակ պարպուեցաւ վրան՝ որոնցմէ մին միայն խորապէս մտնուած է կոնակին մէջ: Ոճրագործներէն մին ձերբակալուած է, իսկ միւսը թիթեղ կառքով մը, որ իրենց համար կանխապատրաստուած է եղեր, խոյս տուած է: Ձերբակալուածը Սամուէլ Կիւլեան կը կոչուի. Նիւպրի րիթէն, ընկ Արապկերցի է, ինքը չի ճանչնար զեր Պ. Սապահ-Գիւլեանը, իւր մեղսակցիցը ծանօթ է և իրեն մասնաւորապէս է: Պ. Սապահ-Գիւլեան անմիջապէս կը փոխադրուի քաղաքի հիւանդանոցը, ուր տեղ կը խնամուի: Բժիշկները խիստ մտանցաւոր չեն գտնելու վրէժը՝ թէ եւ զնա կը մէջն է: Առայժմ այս փորձի տեղիս թիւնները կարճաճանազրէնք այստեղ, ցուցնելու համար թէ 8-9 միտի ի վեր ներքնապէս ծրագրուած այս դաւը ինչպէս կատարուեցաւ վերջապէս, ինչ որ վերջերս հրապարակապէս ալ կը փառաբանուէր:

Ոճրագործը կը խոստովանի որ ինքը բնաւ չի ճանչնար Պ. Սապահ-Գիւլեանը, սակայն ճշմարտութեան հետաւանցած էր, այնպէս համ զած էին: Հա՛րկ է լուի, որ այս ոճրագործը Նազըմի հաստատարի գործակալներու մտքի՝ մէջ երկար ատենէ ի վեր որ որոճուած փոխուեցն էր, որ դուրս պոռթկաց:

Հայ ժողովուրդը համոզելու այնչես հարկ չենք տեսներ, եթէ տակաւին չէ համոզուած այս բոլոր իրողութեանց հանդէպ: որոնք երեւանի ըրրուեցան և պիտի դրուեն տակաւին: Չիթիւնանի, Միտի սպանութիւնը շընչակեան կուսակցութեան վերագրելով՝ որոնք անվիճելիօրէն իրենց ինտրիկներուն զո՛ն եղան, յօղթէ՛ք, վրէժն աղապակելով՝ ուղեցին ժողովուրդին կրքերու քորան արծարել, և եղբայրասպանութեան զիմնով Հնչակեան անդամներու արիւնոզը արբենալ երապեցին: Եւ երբ ժողովուրդը չի

կրցին այս անգամ իրենց խաղերուն գործիք ընել, այն ատեն ըսին «Մենք մեր ճամբէն պիտի երթանք առանց ալ ու ձախ հաւանութեան խրախոյսներ փնտռելու»: «Մեր միջոցներով միայն մենք պիտի հետապնդենք Չարիքին բարձունքը»:

Կըսենք, Այն բոլոր աչք փորող իրողութիւնները, ատենք օրէ օր երեւան կը դրուին՝ Վերակազմ, Հեթո՛ւած ըսուած Մաֆիական խմբակին միտն ու ոսկորը եղած՝ այն բոլոր դատարութիւնները, սճրագործութիւնները և զեղծումները պիտեք էին հայ ժողովուրդը վերջնականապէս համոզելու թէ ատենք, թուրքէն ալ վախճար թուրքեր են, թէ՛ հայ յեղափոխական կեանքի մէջ իրենց 6-7 տարուայ գոյութեամբ, ժանտոխտը, պատուհասը զարձան հայ ժողովուրդի գլխին, թէ օճեր և զան և փաթթուած մնացին Ամերիկայի նորարար երիտասարդութեան վզին:

Կտորներու վրայ չպիտի կանգնիք ու պոռանք թէ ժողովուրդը զվրէժ լուծէ. բնկերները չպիտի ստիպենք եղբայրասպան ոճիրին մէջ քաթիւնուիլ: Ոչ ալ գործուած ոճիրներու արիւններուն վրայ հազցնելով ճեւքեր կորնցնելու ճարտարութիւնը պիտի ընդգրկենք:

Պէտք չունինք և կարիք ալ չենք զգար ժողովուրդի սրտի շարերը թրթրուցնել, շոյել ու փոշիփայել, հատուրիւ և յետոյ խածնել: Պէտք չունինք լալու, ողբալու, լոտնալու և ոչ ալ հայ յեղափոխութեան, հայ լրագրութեան պատիւը պղծող հայհոյութիւններով ողողելու: Մենք պիտի խօսինք զարձակ անողոք իրողութիւններով, զարձակ երկաթի փաստերով, մինչեւ որ հայ յեղափոխութիւնը վերջնականապէս իւր մարմնի վրայ փակած այդ փառութեան պատիւներէն ազատի: Կապաններն որովհետեւ իրենց ամբողջ 7-8 տարուայ ահաւոր զեղծումներու ոճիրներու կապարիքը կը բռնալինք ամենայն հաւատարմութեամբ: Կապաններ, որովհետեւ մեծաքանակ աւագանութեան տնտիջով ըրրուած՝ Միութեան զիմակին տակ հազարաւոր տղարներ իրենց կոկորդը անցուցած, կուզին հայ մարտիրոսութեան սեղանին վրայ իրենց իւր-իրաճանքները կատարել, սակայն բոնկերիք իրենց օճիրէն: Կապաններովհետեւ ճամբան խորտուբորտ էր իրենց ոտքերը կարիւններէր քարերէն ու զիւրեք գլորելու կապանար, կրպաններն, որովհետեւ այլեւս յեղափոխական կեանքի մէջ իրենց ոճիրներու մեղկացումով իրենց Մաֆիականութեան վրայ գերեզմանաքարը կը զըրուէր: Մենք պիտի դնենք հետպետէ այն բոլոր չըրաբերակները և նաճակները, որոնք պիտի ցուցնեն թէ ոչ թէ միայն Միտն և Չիթիւն տակալին Ամերիկա էին, այլ և միութեան խանգաղութեան ատեններն իսկ, զեռ միութիւնը չեղած ծրագրուած է եղեր իրենց մէջ:

9-10 ամիսներ առաջ, Պ. Սապահ-Գիւլեան զեռ Ամերիկա չհասած՝ անոր անուան չուրջ ինչ հրէշային վարկարեկութիւնը շարեցին, ինչ աղտոտ ցեխեր նետեցին անոր ճակտին, ընկերներու սրտերը զրգռելով մէյմէկ վառօթի ընդունարաններ շինեցին, ուժանակի տուփեր և հաւ առիթ եկաւ կայծը տրուեցաւ: Ոճիրը յղանալէ և անձանթ տղին տփին մէջ աւարձանակ մը զնելէ յետոյ անամթ երեւներով ամերիկեան թերթերու զըրասենակաները վազեցին, վազվազեցին

ամէն սեսակ վարձոց օտ տերով և անխիղճ խեղաթիւրո մներով իրենց ուճիրը արդարացնել: Երկար պիտի ըլլար հիւսա այդ բոլորը ներկայացնել որոնք Ամերիկ յի ու Անգլիայի հայութեան ծանօթ են: Ոչ թէ միայն ոճիրին յացողները բաղաթիւ եղած են, այլեւ գործադրողներ ալ մեծ թիւ մը կը կազմեն, ոչոնք անդիտակից գործիքը և մոլեգին աշուտ յոխչը եղան իրենց վարիչներուն զիւային խորհուրդներուն: Մենք մեր պարտականութեան ճամբէն պիտի քալենք, հոգ չէ թէ ժողովուրդը չի կարենայ սթափիլ այս գարնուրի իրողութիւններէն: Մենք մեր պարտքի և իրաւունքի միմուռը մեր չիթիւնութեան պիտի քալենք առաջ, ալ վհատ և անվկանդ քայլերով, իրողութեան որ զնգալը չկրնար բողբոսելու լուցնել, ոչ ալ դաշոյնը ծածկել զեղծումները:

Ո՛Վ Է ՃԵՆՆԵՐ ԽՕՍՈՒՍ

Այսօր հրատարակում ենք իրաւասարգ Հայաստանից երկու կտորներ, մէկը որ հազարու մէ Սապահ-Գիւլեանի սպանութեան փորձի մանրամասնութիւնը, միւսը բացատրում է թէ վերակազմեալները ինչ պատճառներով են ուղղում սպանել հին Հնչակեաններին:

Միւս համարում էլ նմուշի համար պէտք է արտասպանք ոճոյն Հայրենեացից մի կտոր որը նոյնպէս սպանութիւնների մասին է խօսում և բացատրում է ինչու հիները նորերի են սպանում:

Երկու թերթերն էլ նոյն պատճառաբանութիւններն են բերում. երկու թերթերն էլ յայտարարում են որ մէկը միւսին սպանում են որովհետեւ վախնում են որ ճըշմարտութիւնը երեւան գայ:

Պ. ՀԱՅԿ ՓԷՇՏՈՒԼ ՃԵՆՆԵՐ

Իննչան պատուելի, Տուած դասալիք պատասխանիդ մէջ երեք բան տեսայ. 1. թէ սըտեւելը նկարագրիդ էն էական գիծն է. Բ. թէ իրօք քու պաղ մատուըներուդ յանձնուած մատաղ հոգիները կը սառին կը դիակնանան և Գ. թէ բացարձակապէս չես գիտեր այն հայերէն լեզուն զոր գիրոցներու մէջ դասախօսելու յոյս ուղեւթիւնը ունիս:

Ե. Սրմախի խոսակցեան

ԿԱՐԵՒՈՐ

Միւս թիւին մէջ պիտի հրատարակենք Տարուի առաջնորդ Խորհով վարդապետի նամակը, որով նա յեզափոխականներին առաջարկում է անձնատուր լինել, ինչպէս եւ Գաշնակցական երկու կ. կոմիտէներէ պատասխանը ուղղված առաջնորդին:

Խմբագրութիւն

Ա. Խ

ՄԱՐՏԻԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Վարդապետ ի գիտութիւնս

Այս սխալներուն մէջ անցեալ օր չքննող պատասխան Եր կարգացի: Ընտրական եւ որ գիտական հաստատութիւն չունենալս զը յայտարարէք: Արդէն մտադիր էի յատկապէս տարնչալանին աշակերտել ձեզ, ո՛վ մեծը վարդապետ ի գիտութիւնս:

Բայց—հետաքրքրութիւն մը վերջապէս—քրօֆէսօ՛ր, ինչէ՛ն կուսնեցիք այդ պակասս, Գիտական ի՞նչ խնդրի մասին կարծիք յայտնած էի որ զձեզ վրդովեցուցած է: Մի գուցէ հանդէսին գիտական դասախօսութիւնը անյաջող հաջակելուս համար ըլլայ ձեր վրդովմունքը: Ասկայն վարդապետ, արդեօք պիտի համարձակի՞ք հակառակը պնդել: Զգուշացէ՛ք, ոչ միայն ստախօս կըլլաք, այլեւ ծիծաղելի:

Յետոյ, ինքզինքնիդ արդարացնելու համար «ուսուցչական մարմնի որոշում» բացատրութեան կը կաթնիք, ի՞նչ խաղաղութիւններ ալ որ պարտկուած ըլլտն ձեր առաջ քաշած այդ պատրուակին տակ, հետաքրքրական է գիտնալ թէ պիտի կրնա՞ք ձեր քսածը հաստատող որոշման պաշտօնական արձանագրութիւնը գոնէ Շարժումի պատ. խմբագրութեան ցուցնել:

Ասկէ զատ սևուցչ. մարմինը ի՞նչ որոշում տուած է. գիտական նիւթի մը վրայ խօսի՛լ թէ զպրոցի մէջ եղած չեղած գործիքները Սաէտինէնիէի սրահը փոխադրել. ցուցամուրութիւնը ոչ թէ այս կամ այն նիւթին վրայ խօսելու մէջ է, այլ առիթէն օգտուելով պէտք չեղած բաներ ժողովրդին ցոյց տալուն մէջ, Գործիքներէն շատերուն համար ըսիք թէ պակաս են եւ փորձ չըլլուիր, շատերուն համար ալ մութ սննեակի մէջ փորձ կըլլայ ըսիք, ուրեմն ինչո՞ւ բերիք այդ գործիքները մեր աչքին առջեւ շարեցիք: Պարզ է, ժողովրդին ցուցնելու համար թէ ինչի՞ք ու ինչի՞ք ունիք: Եւ դուք, մեծը սօքթէօր, ձեր պաշտօնական սեւ ուղեկողովը այդ սեղաններուն յով կանգնած՝ ձեր գիտական շրթունքներուն բացուածքէն միթէ սա վսեմ բացազանչութիւնը չէի՞ք ուզեր նետել. «գիտցէ՛ք, ո՛վ մարդիկ, որ այս ամէնը ինչի կը պարտիք: » Ասոր ցուցադրութիւն կըսեն, այս անգամ խոշոր գիրբով գրուած:

Հասկցա՞ք, չքննող քրօֆէսօր: Կարծեմ այս նիւթին վրայ ալ կը բաւէ ինքզինքնիդ աւելի մի յոգնեցնէք, օգուտ մը չէք ունենար:

Ունկնդիր

ՆՄԱԿԱՏՈՒՓ

Հայկ փշտամարմններն կը կրկնենք. Շարժումի էջերը բաց են ձեր հրատարակչին փաստաբանութիւնը տըպագրելու: Մենք երբէք տրամադիր չենք ձեզ խօսելէ արգիլելու. աշխարհի մէջ ամէն մարդ իրաւունք ունի իր սկզբունքները պաշտպանելու եւ մենք չենք որ մեր իրաւունքներէն օգտուելով ձեզմէ պիտի խլենք այդ իրաւունքը. մանաւանդ որ մեր թերթին մէջ եղած է ձեր ճառին քննադատութիւնը:

Ձեր ընկեր Պ. Մ. Յովհաննէսեանը, որ նոյնպէս ինքզինք կը պաշտպանէր, ձեր ոճով չէր դրած, ասոր համար ալ, ազատօրէն իր դատը պաշտպանեց, որովհետեւ այն իր հարուածները կուզէր զինքը քննադատողներուն եւ ոչ թէ թերթի վարիչին, աւանց ենթացական դաշինքներու խօսքը բնելու. պատիւը արժանաւորներուն կըլլայ. խոհմութիւնը ունեցէ՛ք ձեր դատը պաշտպանել առանց ուրիշներու, մանաւանդ խմբագրութեան պատեին զպնելու:

Ձեր երկրորդ նամակը, որով կըրկին անխոհմութիւն կուսնեցիք Շարժումի վարիչին հետ մրցման մէջ մտնելու, չի ապագրուիր, որովհետեւ ատով խնդիրը շատ պիտի երկարի. իսկ ձեր դատը պաշտպանելու մէջ, ինչպէս ըսիք ազատ էք

Խմբ.

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կիրակի օրը Պատրիարքական փոխանորդը իր առաջին քարոզը ստուա Վառնայի եկեղեցու մէջ խուռն բազմութեան մը ներկայութեանը: Գարոզի սուղին մասին մէջ բացատրեց, Վարդապետը հայ հեթանոսական կեանքի սմեանսիրուն և ազգային սունբէն մին էր և Գրիգոր Լուսաւորիչ զայն պատաստեց քրիստոնէական ԱՅԼԱԿԵՐՊՈՒՄԻՆ, Արժանապատիւ Հայրը բաւական ոգնորուած խօսեցաւ մեր նախկին կեանքին վրայ շեշտելով և հին անցեալին ազնկ կողմէրը:

Յետոյ բացատրելով աօնին նշանակութիւնը քրիստոնէութեան տեսակէտով, անցաւ Պուլկարիոյ առաջնորդական խնդրին մասին անչեց այդ խնդրի կարեւորութիւնը. ու ժողովրդին հրաւիրելով միացած գործել իր քարոզը վերջացուց Պուլկարահայ գաղութին գիտակցութիւնը գրուատելով:

Քարոզը առ հասարակ աղէկ տպաւորութիւն թողուց:

— Այսօր Վառնայի թաղակառնութիւնը մօտ 160 մարդ հրաւիրած է առաջնորդական խնդրի մասին խորհրդակցելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանը ընտանեկան գործերով զաւակներովը Անգարիա գնաց. բացակայութեան միջոցին երկիրը պիտի կառավարէ նախարարա-

կան խորհուրդը:

— Պետական արտակարգ դատարանի դատախազը Պ. Մալինօֆ արդարացաւ թեան նախարարէն պահանջեր: Եր նախկին նախարարներուն մի ին արուած որոշումը իրագործ: Արդարութեան նախարարը մերժած է դատախազին պահանջը կատարել, յայտարարելով որ մինչեւ ազգային ժողովի վերաբացումը չի կրնար արուած որոշումը գործադրել, քանի որ ազգային ժողովը պետ իր վերջին խօսքը չէ յայտարարած նախարարներու ներման մասին:

— Կը կարծուի որ հոկտեմբերի սկիզբները ներկայ ազգային ժողովը պիտի ցրուուի և նոր ընտրութիւններ պիտի ըլլան:

ԱՆՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Կրկին Սուլթանի հիւանդութեան մասին լուրեր կը պատին. և այս անգամ հիւանդութիւնը գրեթէ անբուժելի կը համարուի:

— Մակեդոնիայի յեղափոխականները նոր ժողով մը ունեցեր են, և իրենց նախկին որոշումէն շատերը փոխած են. նոր որոշումներու մասին մանրամասնութիւնք կը պակսին:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Լուպէի Անգլիա այցելելէն վերջը խումբ մը Ֆրանսացի երեսփոխաններ հիւրընկալելու Լօնտօն, այդ ճամբորդութեան զլխաւոր նպատակն երկու մեծ պետութեանց մէջ համաձայնութիւն կայացնել միջնորդ դատարան մը հիմնելու ֆրանսայի և Անգլիայի միջեւ տեղի ունենալիք զանազան խնդիրներ այդ դատարանին միջոցաւ կարգադրելու համար:

Անգլիական երեսփոխանները մեծախրով ընդունեցին ֆրանսացի երեսփոխանները: Առ հասարակ Անգլիոյ մէջ դէպի ֆրանսացիները համակրութեան մեծ հասանք մը սկսեր է:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՃԱՐՏՈՆ

Երկու տէրութեանց յարաբերութիւնը հետզհետէ կը լարուի. երկու կողմէ ալ պատրաստութիւններ կը տեսնուին: Պատերազմը տնխոսաբերի կը կարծուի: Ճարտն յայտնելի որ Անգլիա և ֆրանսա իրեն պիտի աջակցին:

ՆՈՐ ՍՍՍԵՆՈՒՄ ԳՐԲԵՐ

Ընտրականութեամբ ստացանք Պ. Ա. Չի «Մեծ Առաւոր» բանաստեղծութիւն. հրատ. 2. 3. 7. Ծանօթ կոմիտէի, Գին 50 ս.

— Եր. Պալեանի «Հայ Սօցիալ դէ. յօկրատ միութիւնը եւ իր «Պարտարիւտ» օրգանը» քննադատական գրուածք մը. հրատարակութիւն Գառնիկ Մազմանեանի: Գին 60ս.

— Ս. Գէորգիէլի հրատարակած պուլկարեան լեզուի Զօլայի «Ժէրմիալը», Գին 4 Ֆրանք:

Այս գրքերու մասին կը խօսիր ապագային:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ ԿՐԹԱՏՈՒՆ

Լօզան, Ջուլիցիսիա

Երկրորդ տարի

Բ. տարեշրջանի դասախօսութիւնները կսկսին Սեպտ. 1/14ին

Արեւելեան կամ հայկական կրթատուները կընդունին 10-20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողքներու բողոքներէն համեմատ, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագիտական սուղ ու լուրջ կրթութիւն մը, ներգաշնակօրէն և սերտիւ միացած ազգային հիմնական կրթութեան հետ: Հայաշահեթաններու կաւանդուն, և այս պատճառով և է քննարկութիւնը: Հայ երէն լեզու, հայ մատենագրութեան պատմութ. եւ այլն: Ընտանեկան կեանք:

Կարելի է նաեւ օգտուիլ տեղական հանրաձայնութիւնը պարոններէն: Կրթատան տարբերակներ, հակառակ ընծայուած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անտօրինակ կերպով աման է: Կրթատան յայտագիրն ամէն ուղղի կը շրկուի:

ՏՆՕՐԷՆ

Մ. Նալպանեան

Տօքթ. ի գիտութիւն համալսարանական մասնաւոր-ուսուցիչ

Հասցէ՝ Լօնտօն 4.

Լօզան. — Ս/իս

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՐՍԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը յայտարարենք մեր բաժանորդներուն որ շտապե՛ն իրենց բաժնեգրները յանձնել «Հայրենիք» խմբագրութեան. կամ թէ չէ շրկեն մեզի: Բոլոր բաժանորդներուն իրենց հաշիւները լծնցնելու համար երկու ամիս ժամանակ կուտանք, չը վճարողներուն անունները պիտի հրատարակենք ճշարտումի և «Հայրենիք» մէջ:

Խմբագրութիւն

ՄԱԶԻ ՆԵՐԿ

ՀՐՍՏԱԼԻ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Դիւնէ 9. Ա. Զարպիտեանի վանա Պուլկարիա

ՕՏՎՈՐՈՒՆԷՄ

Мурадъ-Браносянъ

Печатница «Взаимность» Варна